

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԱԶԱԿՑՈՒՄ Է «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ**

28.11.2023 14:18



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ**

Շարունակելով մեր ավանդույթը՝ ցանկանում ենք 2023թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 16:00-ին, այցելել Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են: Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն հայտնաձևելու կարող են info@advocates.am էլ. հասցեին նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են հետևյալ իրերը՝ (անսահմանափակ քանակի)

- թարմ մրգեր և բանջարեղեն
- լոգանքի պարագաներ (գել, օճառ...)-Johnson's Baby
- Լվացքի գել
- կրեմ topi
- Similac,կաթնային խառնուրդ-1,2
- BEBI շիլաներ (каша)
- Huggies, Libero, Puffies տակդիրներ (ցանկացած չափերի)
- տակդիրներ (подкладки,underpads 60\*90 սմ )
- թաց անձեռոցիկներ
- շոկոլադե սմայլիկներ գրանդ քենդի
- շոկոլադե կոնֆետներ Kinder (միայն բատոնչիկները, քանի որ երեխաները միայն դա են կարողանում հարմար բռնել)
- բիսկվիթ
- չոկոպայ
- կեքս
- խաղալիքներ, փայտյա խաղալիքներ՝ ձեռքի մկանները զարգացնող (մոտորիկա) (պլաստիլիններ, ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունվում):

-տոնածառի խաղալիքներ

Մանկատունը օգնում է նաև անապահով ընտանիքներին, ուստի կարող եք ուղարկել նաև հետևյալ իրերը`

-աթոռակ, մանեթ, քայլակ (կարող է լինել օգտագործված)

-մանկական հագուստ

Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ վարչական շրջանում

Փաստաբանների պալատից կամավորների խումբը մեկնելու է 2023 թ. դեկտեմբերի 25 -ին` ժամը 16:00-ին: Եթե ցանկանում եք նաև մանկատուն այցելել ապա խնդրում ենք նախապես տեղեկացնել:

*Հարգանքով`*

*ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ*

*ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմ*

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```